

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱՐԱՐ, ԱՐԺԱՆԻ ԳՐԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆ՝ ՄԵԾ ՀԱՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Բոլոր ժամանակների ամենախոշոր հայ գործարար և ազգային բարերար Ալեքսանդր Հովհաննեսի Մանթաշյանցի ծննդյան 170 և մահվան 100-ամյակների առթիվ լույս է տեսել «Ալեքսանդր Մանթաշյանց» համապարփակ շքեղ ժողովածուն՝ ճանաչված հրապարակախոս Խաչատուր Դադայանի աշխատասիրությամբ¹։ Խ. Դադայանը հայագիտության ոլորտում, բայց նոր միայն հետազոտվող բնագավառներից մեկի՝ հայոց հինավուրց, բազմադարյան տնտեսական մշակույթի պատմության հարցերի վերաբերյալ հարյուրավոր հոդվածների և ավելի քան մեկ տասնյակ գրքերի հեղինակ է՝ «10 կապիտալիստ» (2003 թ.), «Հայեր և բանկեր» (2005 թ.), «Հայերը և Բաբուն 1850-1920 թթ.» (2006 թ.), ժուլետեն՝ 2007 թ., «Վաճառականական պատմություններ» (2007 թ.), «Ալեմարկներ հայ վաճառականության պատմության» (2009 թ.), «Ապրոյան գերդաստանի պատմությունը 16-րդ դ. - 20-րդ դ. 1-ին կես» (2010 թ.), ժուլետեն՝ 2010 թ., անգլերեն՝ 2011 թ., և այլն։

Ներկայացվող աշխատությունն ամենից առաջ կարևոր աղբյուրագիտական արժեք է ներկայացնում։ Այն սկզբնաղբյուրի նշանակություն ունի և կարող է հիմք ծառայել Ալ. Մանթաշյանցի մասին հետազոտությունների համար։ Հեղինակը «պեղել է» ամենատարբեր աղբյուրներ՝ արխիվային նյութեր, բազմաձև մամուլ, մեծաքանակ ուսումնասիրություններ, նյութեր համացանցից և ընթերցողի սեղանին է դրել հանրագիտարանային տեսակի մի գիտական աշխատասիրություն՝ այդպիսի յուրովի ներկայացնելով մեծ գործարարի, բարերարի, հայի, պարզապես մեծատառով մարդու ամբողջական գրական-գիտական կենսագրությունը։ Այս հետազոտությունը գնահատանք է, ազգովի չվճարած բարոյական պարտքի ուշացած հատուցում, որը երախտագիտությամբ փորձել է կատարել Խ. Դադայանը։

Առանձին ճանաչողական, գիտական արժեք ունեն ժողովածուն կազմողի նշած բաժինները՝ «Բարերարության համահավաք ցանկը», «Բարերարության ընդհանուր գումարը՝ 2 մլն 563454 ռ.», «Ալ. Մանթաշյանցի ընտանիքը» և, այսպես կոչված, «Այցեքարտը», որոնց կից ներկայացվում են բազմաթիվ գիտական ծանոթագրություններ և պատմական նշանակություն ունեցող լուսանկարներ։

Ալ. Մանթաշյանցը հայոց առևտրատնտեսական դարավոր պատմության դասական, հայկական կապիտալիզմի հիմնադիրներից և կապիտալի

¹ Ալեքսանդր Մանթաշյանց, հուշագրություններ, հրապարակումներ, փաստաթղթեր։ Կազմ. և ծան. հեղ. Խ. Դադայան, Եր., «Գասպրինա», 2011, 180 էջ։

մշակույթը կերտողներից մեկն է: Նա իր գործունեությամբ յուրովի հարըստացնելով հայ վաճառականության պատմությունը՝ գրեց նաև ազգային կապիտալիստի բարոյականության վարքականոնի մատյանը:

Մեր խորին համոզմամբ՝ այսօր Մանթաշյանցին անդրադառնալն ունի խիստ արդիական հնչողություն, որքանով, պատմության կամոք, տևական ընդմիջումից հետո մեզանում կրկին պայմաններ են ստեղծվել հայ գործարար մշակույթի ավանդույթների վերհանման ու զարգացման, հայ գործարարների նոր սերնդի աճի ու դաստիարակության համար: Ավելին, Խ. Դադայանի կարծիքով, եթե այսօր մեր նորօրյա կապիտալիզմի կերտման դժվարին պայմաններում գեթ մեկ նորընծա փողատեր՝ Մամոնայի (հարըստության աստծու) ստրուկ և ստամոքսի գերի, Մանթաշյանցի մասին այս ժողովածուից դաս առնի և խորհի հավերժական արժեքների՝ արժանապատիվ կյանքի ու մահվան, բարեգործության ու բարեգթության և, ինչպես մեր մեծ բանաստեղծ Դանիել Վարուժանն էր գրում, այնպես ապրելու մասին, որ հայրենիքը չզղջա մեզ պես հայ ծնած լինելու համար, ապա հեղինակը խորապես բավարարված կլինի իր կատարած աշխատանքից:

Խ. Դադայանը նախ անդրադառնում է Ալ. Մանթաշյանցի «գործարար» կենսագրության քննությանը: Նա գործարարության առաջին դասերը, ազգակիցների շնորհիվ, ստացավ հեռավոր Մանչեստրում՝ Եվրոպայի տեքստիլ արտադրության խոշոր կենտրոնում: Վերադառնալով Թիֆլիս՝ ձեռնարկեց սեփական առևտրական գործը: Հետագայում Մանթաշյանցը անցում կատարեց բանկային ոլորտ: Նրա գործունեության շնորհիվ «Թիֆլիսի առևտրային բանկը» դարձավ Ռուսաստանի լավագույն հաստատություններից մեկը: Մեծ հաջողությունների հասնելով ֆինանսական ոլորտում՝ Ալ. Մանթաշյանցը, սակայն, չհրաժարվեց մանուֆակտուրային առևտրից: Բացի այդ, նա միաժամանակ կատարեց հաջորդ բախտորոշ և հաջողակ քայլը՝ ներդրումներ կատարելով Բաքվի՝ թափ հավաքող նավթարդյունաբերության մեջ: Այստեղ Ալ. Մանթաշյանցը և Մ. Արամյանը ստեղծեցին «Ա. Հ. Մանթաշյանց և ընկ.» նավթարդյունաբերական և առևտրային ֆիրման: Հենց նավթարդյունաբերության ոլորտում էլ բուռն կերպով դրսևորվեցին Ալ. Մանթաշյանցի՝ որպես արհեստավարժ գործարարի, տնտեսական բնույթի բանակցությունները փայլուն կերպով վարողի անուրանալի որակները, որոնք էլ մեծապես կանխորոշեցին նրա հետագա հաջողությունները: Խ. Դադայանի կարծիքով՝ Մանթաշյանցի հաջողակ մուտքը գործարարության աշխարհի պայմանավորված էր հետևյալ գործոններով. նախ՝ նա ֆինանսական խոշոր միջոցներ ունեցող դրամատեր էր, իսկ նավթարդյունաբերությունը շարունակ նորանոր ներդրումներ պահանջող ոլորտ է: Երկրորդ՝ մշտական կապի մեջ լինելով և շփումներ ունենալով Եվրոպայի հետ՝ Մանթաշյանցը տիրապետում էր գործարարության կառավարման՝ իր ժամանակի մեթոդներին ու մեխանիզմներին: Երրորդ գործոնը նրա մարդկային բարձր հատկանիշներն էին, որոնք արտահայտվում էին խոր ազգասիրությամբ, բայց նաև ալյազգիների և անգամ մրցակիցների նկատմամբ բարի ու հանդուրժողական վերաբերմունքով: Տքնաջան աշխատանքով, խելքով, շրջահայեցությամբ, ձեռներեցի բնատուր տաղանդով օժտված Ալ. Մանթաշյանցը ժամանակի ընթացքում կովկաս-

յան, ռուսական ու նաև համաշխարհային քիզնեսում հարթեց «նավթարքայի» իր փառավոր ճանապարհը:

Գործարար աշխարհում շրջանառվում է հայտնի մի արտահայտություն. «Գործարարության մեղալի հակառակ կողմը բարեգործությունն է»: Այս իմաստով ևս պարզապես անգնահատելի են Մանթաշյանցի մատուցած ծառայությունները հայ ժողովրդին, նաև օտարներին, հայ եկեղեցուն, մշակույթին և հատկապես երիտասարդ սերնդի կրթության գործին:

Ինչպես նկատում է Խ. Դադայանը, բարեգործությունը հայոց մեջ իրականացել է քրիստոնեական բարոյականության շրջանակներում: Դա քրիստոնեական արժեհամակարգի բաղադրատարրն է և ունի շուրջ 17 դարի պատմություն: Բարերարության պատմության մեջ որպես առաջին հայ բարերար հիշատակվում է Ներսես Մեծ կաթողիկոսը (329-373): Հայ բարերարների բացարձակ մեծամասնությունը վաճառականական խավի ներկայացուցիչներ են, նրանց հաջորդում է հոգևոր դասը, ավելի ուշ շրջանում այս ոլորտում առաջին շարքում են բժիշկները: Սակայն, ինչպես ցավով արձանագրում է հեղինակը, հայագիտական ուսումնասիրությունների ծիրից դուրս են մնացել թե՛ մեր բազմադարյան ազգային կապիտալի ձևավորման, կայացման ու զարգացման, թե՛ բարեգործության պատմությունները: Ալ. Մանթաշյանցը բարեգործության ոլորտում իր կատարած դերով ևս մնաց անգերազանցելի: Խ. Դադայանն անբացատրելի է համարում այն երևույթը, որ 4-5 տարվա կրթություն ունեցող այս անձնավորությունն իր ժամանակին ստեղծեց մեր ժողովրդի ինտելեկտուալ ներուժը: Մանթաշյանցի բարերարյալների անուններն արդեն խոսում են ոչ միայն իրենց, այլև բարերարի մատուցած պատմական ծառայության մասին՝ Կոմիտաս, Ստ. Շահումյան, Ալ. Շիրվանզադե, Գ. Գյուլբենկյան և շատ ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրի անվան հետ է կապված մեր հոգևոր-գաղափարական մշակույթի մի ամբողջ ոլորտի պատմությունը: Հայ բարերարության առնչությամբ, ինչպես նշում է հեղինակը, միակ, բայց, ըստ էության, շատ ցավալի բացթողումը հայ դրամատեր բարերարների, այդ թվում նաև Մանթաշյանցի, ինչպես և Գյուլբենկյանի պարագայում, ազգային-քաղաքական հեռատեսության բացակայությունն էր: Դա բացատրվում է նրանով, որ այդ ժամանակ մենք չունեինք ձևավորված ազգային գաղափարախոսություն, որի արդյունքում, հրեաների օրինակով, այդպես էլ չունեցանք պետականաստեղծ կապիտալիստներ:

Գործարարությունը եռանկյունու տեսքով ներկայացնող տեսաբաններն այդ գործունեության մեջ առանձնացնում են երեք կողմ՝ գործարար, պայմաններ և բարոյականություն: Դատելով գրախոսվող աշխատանքի բովանդակությունից՝ Ալ. Մանթաշյանցի պարագայում մարդկային-բարոյական գործունը վճռորոշ դեր է ունեցել:

Ինչպես ներկայացնում է Խ. Դադայանը, Ալ. Մանթաշյանցի տնտեսական հանճարը ուղիղ համեմատական է նրա մարդկային էությանը, միանգամայն ներդաշնակ՝ խիստ հայեցի բարոյական նկարագրին, թատերասեր ու կենսախիճն ընկալողությամբ: Մանթաշյանց մարդու բարոյական կերպարը և խառնվածքը լիովին համապատասխանում էին նրա գործունեության դարաշրջանում Արևմուտքում մշակված «Գործարար մարդու 10

պատվիրաններին», գործարարին առաջադրվող կարևոր պահանջներին՝ համեստ, առատաձեռն, կենսախիճնո, շփվող, հումորով, մարդամոտ: Նա ուշադիր լսում էր այլոց խորհուրդները, բայց կայացնում էր սեփական որոշումները՝ որպես հավատամք ունենալով իր ազգն ու Հայ առաքելական սուրբ եկեղեցին:

Խ. Դադայանը գրում է, որ անբարենպաստ հասարակական-տնտեսական պայմանները՝ պատերազմը, հեղափոխությունը, սրանց բերած ավերածությունը գրեթե փլատակների վերածեցին Ալ. Մանթաշյանցի *տնտեսական կայսրությունը*: Սակայն ժամանակն անգոր գտնվեց նրա կատարած բարեգործությունների հանդեպ, և պատահական չէ, որ Մանթաշյանցը մեր ժողովրդի հավաքական հիշողության մեջ մնացել է որպես ***Մեծ բարերար***:

Խ. Դադայանն անդրադարձել է նաև Ալ. Մանթաշյանցի ժառանգների հետ կապված հարցերին, երկրորդ որդու՝ Լևոն Մանթաշյանցի «տունդարձի» խնդրին, ով հոր մահվանից հետո փայլուն կերպով շարունակեց նրա գործը, սակայն, հանիրավի, առայսօր մեզանում չի ստացել պատշաճ ճանաչում և գնահատական: Լ. Մանթաշյանցը միանգամայն նոր, միջազգային չափանիշներին համապատասխան որակ հաղորդեց հոր գործին՝ դառնալով համաշխարհային դեմք: Ավելին, նա ոչ միայն ժառանգեց հոր գործը, այլև նրա ազգասիրությունը, բարերարի պատասխանատվությունը հարազատ ժողովրդի հանդեպ:

Վերջում ուզում ենք հիշատակել նաև գրքի հրատարակության մեկենաս, հայ նշանավոր գերդաստանի շառավիղ, ռուսաստանաբնակ ձեռներեց Վահան Ափրոյանի անունը:

ՄԱՐԻԵՏԱ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ, ՄԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ